

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

31 հոկտեմբերի 2014 թ.
ք. Երևան

N 764-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-128-Ն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը և 10-րդ հոդվածը՝

Հրամայում եմ՝

- Հաստատել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ ֆինանսների նախարար՝

Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2014 թվականի հոկտեմբերի 31-ի
N 764-Ն հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Փաստաթղթի հեղթական համարը
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	(որացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Առևտրային կազմակերպության անվանումը	
3. Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի) անունը, ազգանունը	
4. Հարկ վճարողի գտնվելու վայրը	
5. Հեռախոսի համարը	

Սույն հայտարարությունը ներկայացնում եմ _____ 20____-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Սույնով հայտարարում եմ որ՝

ա) նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, չի գերազանցել **58,35 մլն դրամը**.

բ) չեմ հանդիսանում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և (կամ) ներմուծող.

գ) չեմ հանդիսանում բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից, գրավատու, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեություն իրականացնող, ներդրումային ֆոնդ, ֆոնդերի կառավարիչ, վճարահաշվարկային կազմակերպություն, խաղատու, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող, աուդիտորական ընկերություն, հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող կազմակերպություն.

դ) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ.

ե) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպության կանոնադրական

(բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) **չի պատկանում** ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին.

զ) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) **չի պատկանում** անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).

է) սույն հայտարարությունը ներկայացնող առևտրային կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին **չի պատկանում** ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը):

Տեղյակ եմ սույն հայտարարության մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը:

Կազմակերպության
տնօրեն

(անհատ ձեռնարկատեր, նոտար) (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հայտարարության ստացման
ամսաթիվը, ամիսը, տարեթիվը՝ _____ 20 թ.

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

(հավելվածը լրաց. 15.01.15 N 6-Ն)